## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԷՄԳ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻՆ

Ապրիլի 18-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) գլխավոր տնօրեն Յուկիյա Ամանոյին՝ ուղեկցությամբ ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների փոխնախարար Արեգ Գալստյանի:

Հանդիպմանը Նորին Սրբությունը ողջունեց Ատոմային էներգիայի միջազգային գործակալության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ ձեւավորված համագործակցությունը՝ ուղղված Մեծամորի ատոմակայանի անվտանգ շահագործմանը: Վեհափառ Հայրապետը կարեւորեց ԱԷՄԳ առաքելությունը ատոմային էներգետիկայի զարգացման եւ դրանից բխող զանազան վտանգների կանգարխնման մեջ՝ բարի արդյունավորում մաղթելով գործակալության աշխատանքներին:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ միջուկային էներգիայի վտանգներին, մասնավորապես վերջերս Ճապոնիայում արձանագրված ողբերգական միջադեպին: Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ ԱԷՄԳ ջանքերի արդյունքում կնվազեն այդօրինակ վտանգները, իսկ մարդկությունը կգտնի այլընտրանքային միջոցներ՝ իր կյանքի առաջընթացը երաշխավորելու համար:

Վերջում Վեհափառ Հայրապետը վերստին իր գնահատանքը հայտնեց գործակալության բոլոր այն ջանքերի համար, որոնք ներդրվում են ի նպաստ Հայաստանի ատոմային էներգետիկայի զարգացման:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 21-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի մշակույթի եւ ազգային ժառանգության նախարար Հունոր Կելեմենին:

Ողջունելով նախարարի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ արձանագրեց, որ երկու ժողովուրդների միջեւ ձեւավորված դարավոր բարեկամությունը շարունակում է ամրապնդվել շնորհիվ երկու պետությունների արդյունավետ գործակցության: Անդրադառնալով ռումինահայ համայնքին՝ Վեհափառ Հայրապետն ուրախությամբ հաստատեց, որ այսօր հայ համայնքը կարողանում է ազատորեն կազմակերպել իր ազգային-հոգեւոր կյանքը, իսկ համայնքի ներկայացուցիչները ներգրավված են երկրի կյանքի բոլոր ոլորտներում: Այս առիթով Նորին Սրբությունն ի դեմս նախարա-

րի շնորհակալություն հայտնեց Ռումինիայի իշխանություններին ռումինահայ համայնքի, ինչպես նաեւ Ռումինիայի հոգեւոր ժառանգության մաս կազմող հայկական սրբավայրերի հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար:

Վեհափառ Հայրապետը նաեւ տեղեկացրեց նախարարին առաջիկա օգոստոս ամսին Ռումինիա կատարելիք հովվապետական իր այցի մասին՝ Սուչավայի Հաճկատար Ս. Աստվածածին վանքի 500-ամյակի տոնախմբման եւ վերաօծման արարողության առիթով:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ տիար Հունոր Կելեմենն անդրադարձան ժողովուրդների առջեւ ծառացած մարտահրավերներին, Հայ Առաքելական եւ Ռումին Ուղղափառ քույր եկեղեցիների հարաբերություններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Ապրիլի 22-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Երեւանը 2012 թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի մեկնարկի առիթով Հայաստան ժամանած Բուենոս Այրեսի քաղաքապետ Մաուրիսիո Մակրիի գլխավորած պատվիրակությունը:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ Մայր Աթոռի՝ որպես հոգեւոր-մշակութային նշանավոր օջախի ունեցած դերին ու նշանակությանը հայ գրատպության սկզբնավորման եւ զարգացման գործում: Վեհափառ Հայրապետը նախախնամական նկատեց, որ «Երեւանը գրքի համաշխարհային մայրաքաղաք» տիտղոսը հանձնվելու է հենց Մաուրիսիո Մակրիի ձեռքով, քանզի զգացումով եւ ապրումներով շատ մոտ երկու ժողովուրդները միմյանց նկատմամբ առանձնահատուկ սեր եւ ջերմություն են տածում: Նորին Սրբությունը նաեւ ընդգծեց, որ պատվիրակության ներկայությունը Հայաստանում ավելացնում է տոնական այս օրերի ջերմությունը:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն ի դեմս քաղաքապետի իր օրհնությունը փոխանցեց Արգենտինայի ժողովրդին՝ մաղթելով, որ Տերը խաղաղության եւ առաջընթացի մեջ պահի երկիրը եւ արդյունավորի Արգենտինայի բարեպաշտ ժողովրդի բոլոր ջանքերը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ